

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՄԵՐ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՄԻՆ, ՈՍԿԵՂԷՆ ԽՕՍՔԵՐ ԽՐԱՏՆԵՐ ԵՒ ՊԱՏԳԱՄՆԵՐ


ՆԱՍԱԿ ԱՂՔԱՏՆԵՐՈՒ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արդ դուն, որ չփառք ես եւ աղփատ, ի՞նչու Աստուծոյ մասին անդադար բաներ կ'ըսես: Աստուած իրեն պատկանող, որեւէ բանէ զրկե՞ց բեզ: Եղբայրներու նման հարուստին եւ աղփատին հաւասարաբէս չբաժնե՞ց նոյն աչքերը, նոյն ձեռքերը եւ նոյն ոտքերը: Հաւասարապէս կը վայելենք արեւը, օդը եւ անձրեւը: Բոլորս ալ յառաջ եկած ենք հողէն եւ Ադամէն: Բոլորին համար կայ միայն մէկ մկրտութիւն, մէկ շնորհիք, մէկ մարմին ու արիւն Քրիստոսի: Բոլորիս համար կայ մէկ երկիր, մէկ երկինք եւ մէկ տիեզերական նիւթ: Ահաւասիկ ասոնք են Աստուծոյ բարիքները, որ Ան հաւասարապէս տուաւ, թէ՛ աղփատին եւ թէ՛ զօրաւորին: Ուրեմն ի՞նչ բանէ զրկեց բեզ եւ կողմնակալութիւն ըրաւ ի նպաստ հարուստներու: Գիտեմ, որ այս մասին ոչինչ ունիս ըսելիք, այսուհանդերձ կ'ըսես. «Ո՞րքե՛տ անոր այսքան հարստութիւն»: Լաւ հասկցիր, Աստուած չէ, որ իրեն բերաւ, ցոյց տուաւ կամ շնորհեց այդ հարստութիւնը եւ բեզ զրկեց: Ոմանց հարստութիւնը գոյացաւ ագահութեամբ, ոմանցը՝ յարատեւ աշխատանքով, իսկ այլոցը՝ հօրենական ժառանգութեամբ:

(Ճառեր՝ Յովհան Մանգակունցի)

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՊԼՂԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀՎՏԱՏՈՒՄԸ

2.- Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Սարկաւազը պատարագիչ քահանայէն ողջոյնը ստանալով վար կ'իջնէ եւ կը փոխանցէ ատեանին կեղորոնը կանգնած առաջնորդին, իսկ բացակայութեան՝ աւագերէցին, ըսելով.-

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»: Այսինքն՝ Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ:

Իսկ ստացող եկեղեցականը կը պատասխանէ.


«Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»: Այսինքն՝ Օրհնեալ է Քրիստոսի յայտնութիւնը:

Այսպէս ամէն մէկ հաւատացեալ, որ կը ստանայ ողջոյն, պարտի զայն փոխանցել կողքի կեցող հաւատացեալին, միշտ կրկնելով ողջոյնի ստացման եւ փոխանակման վկայախօսութիւնը:

Քրիստոսի ներկայութիւնը ինքնին ծնունդ կու տայ խաղաղութեան: ... Ըարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 30 ՅՈՒՆԻՍ 2024 ԹԻՒ 26

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԵՍ. 3.1-11: Հռ. 11.13-24: Մատթէոս 14.13-21

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 14.13-21

Երբ Յիսուս Յովհաննէսի գլխատուճը լսեց, նաւակով մեկնեցաւ այդտեղէն եւ առանձին գնաց ամայի վայր մը: Շրջանի քաղաքներուն բնակիչները լսելով ասիկա, քալելով հետեւեցան իրեն: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ, տեսաւ մեծ բազմութիւնը, գթաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց: Երեկոյեան, իր աշակերտները իրեն մօտեցան եւ ըսին. «Ամայի տեղ ենք եւ ժամանակն ալ ուշ է: Արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերը իրենց համար ուտելիք գնելու»: Յիսուս ըսաւ. «Ինչո՞ւ իրենք երթան: Դու՛ք տուէք անոնց ուտելիքը»: Անոնք ըսին Յիսուսի. «Հոս գրեթէ ոչինչ ունինք, բացի հինգ հացէ եւ երկու ձուկէ»: Յիսուս ըսաւ. «Հոս բերէ՛ք ատոնք»: Եւ հրամայեց, որ ժողովուրդը նստեցնեն խոտին վրայ: Ապա առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, փառք տուաւ Աստուծոյ, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն, որոնք բաշխեցին ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան եւ աշակերտները արեւցած կտորները հաւաքելով՝ տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուտողներուն թիւը շուրջ հինգ հազար էր, կիներն ու մանուկները չհաշուած:

ՄԻԱՍՆԱԲԱՐ ԽՈՐՀԻՆԸ

Մենք եւս, որեւէ գործ կատարելէ առաջ, նախ պետք է շնորհակալութիւն յայտնենք Աստուծոյ, իր տուած պարգեւներուն համար, ապա մեր աղօթքը բարձրացնենք իրեն եւ իր օրհնութիւնը խնդրենք, որովհետեւ արդիւնաւետ աշխատանքը կը յաջողի Աստուծոյ օրհնութեամբ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ՝ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԸՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՊՕՂՈՍԻ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՊՕՂՈՍ Առաքեալ

Քրիստոսի յարութենէն ու համբարձումէն ետք ընտրուած առաքեալը՝ Պօղոս առաքեալ եղաւ քրիստոնէութիւնը տարածող եւ քարոզող մեծագոյն առաքեալը: Ան իր հրեական ծագումով, ստացած յունական կրթութեամբ եւ հռոմէական հպատակութեամբ, կը դառնայ ընտիր անօթ լսաւագոյն տարածելու քրիստոնէութիւնը այն ժամանակուան մշակոյթին համապատասխան մօտեցումով եւ իր հռոմէական հպատակութենէն օգտուելով:

Պօղոս առաքեալ, որ նախապէս կը կոչուէր Սօղոս, ծնած է Կիլիկիոյ Տարսոն քաղաքին մէջ, բայց սնած Երուսաղէմի մէջ, Գամաղիէի ձեռքին տակ հրեական ճշմարիտ օրէնքով (Գրծ. 22.3): Ան եղած է փարիսեցի եւ թունդ ազգայնական:

Քրիստոնէական եկեղեցոյ առաջին շրջանին, Պօղոսի մեծագոյն մտահոգութիւնը կ'ըլլայ հալածել քրիստոնէաները եւ բանտարկելով, հրէութեան վերադարձնել զանոնք: Ան Երուսաղէմի մէջ բոլորէն ճանչցուելով իբրեւ հակառակորդ նոր կրօնքին, կը խնդրէ քահանայապետէն, որպէսզի Դամասկոս երթայ ու այնտեղ եւս հալածէ քրիստոնէաները եւ բանտ նետէ զանոնք: Սակայն Դամասկոսի ճամբուն վրայ Քրիստոս կը յայտնուի իրեն եւ դարձի կը բերէ, զինք ընտրելով իբրեւ մեծագոյն քարոզիչը Քրիստոնէութեան:

Այսպիսով Պօղոս, այս անգամ Մեծագոյն եւ ճշմարիտ Քահանայապետէն առաքուելով կը կազմակերպէ ճամբորդութիւններ, որոնք կ'ըլլան իր առաքելութեան ամենէն գործօն ժամանակները եւ առիթները:

Ան կը հիմնէ եկեղեցիներ եւ իր ճամբորդութիւններէն ետք նամակներ դրկելով անոնց կը քաջալերէ զիրենք մնալու այն հաւատքին մէջ, որ ինք քարոզած է իրենց: Պօղոս առաքեալի նամակները Նոր Կտակարանին մէջ թիով 14 հասնեն:

Պօղոս առաքեալի կատարած երեք ճամբորդութիւններուն մասին կը պատմէ Գործք Առաքելոց գիրքը, ուր հեղինակը ներկայացնելով Պօղոս վերջին ճամբորդութիւնը դէպի Հռոմ կը փակէ գիրքը:

Աւանդութեան համաձայն, Պօղոս կը հասնի մինչեւ Սպանիա եւ ապա վերադառնալով Հռոմ այնտեղ սուրով կը նահատակուի:

ՀԱՐՅՈՒՄ ՊԼՏԱՍԽԱՆ ԲՎԺԻՆ

Ո՞Վ Է ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱՍՏԱՏՈՂԸ

Յիսուս Քրիստոս՝ իր մատնութեան երեկոյին: Երբ վերնատունը իր աշակերտներուն հետ սեղան նստած էին, Հին Ուխտի Զատիկը կատարելէն ետք, Նոր Ուխտի Զատիկը հաստատեց Հացը առնելով ըսաւ. «Առէ՛ք կերէ՛ք, ասիկա իմ մարմինն է» (Մտ 26.26), ապա բաժակը առաւ ու ըսաւ. «Ամենք ալ խմեցէ՛ք ասիկա իմ Նոր Ուխտի արիւնն է» (Մտ. 26.28), եւ զայն Առաքեալներուն հաղորդելով պատուիրեց միշտ կատարել հաղորդութեան խորհուրդը, (ըսելով) «Այս մէկը կատարեցէ՛ք իմ յիշատակիս համար» (Ա. Կրթ.-11.24):

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ՈՐ ԴԱՐԱՇԵՐՉԱՆԻՆ ՄԷՋ Կ՛ԱՊՐԻՆՔ

Երբորդ օրը հարսանիք մը կար: Մեծն Կիւրեղ «Երբորդ օրը» բառերուն մէջ խորհրդանշական իմաստ մը կը տեսնէ, նաեւ: Ան կը հաստատէ, թէ Յիսուս իր հարսանիքը կատարելու համար իր եկեղեցիին հետ՝ իր եկեղեցին եկաւ երբորդ հանգրուանին: Առաջին հանգրուանը, կ'ըսէ Կիւրեղ, Օրէնքի տուչութենէն առաջ ապրած հայրերուն ժամանակաշրջանն է, երբորդ հանգրուանը՝ Օրէնքի շուրջին տակ ապրած մարգարէներուն ժամանակաշրջանն է, իսկ երբորդ հանգրուանը՝ շնորհքի դարաշրջանն է:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Մենք, ո՞ր դարաշրջանին մէջ կ'ապրինք: Տակաւին Օրէնքը չստացած հայրերն ու դարաշրջանին, Մովսիսական Օրէնքի՞ դարաշրջանին, թէ՛ Քրիստոսի աշխարհ բերած փրկարար ՇՆՈՐՀՔԻ դարաշրջանին: Սիրելի ընթերցող, եթէ կը խորհիս, որ բարի գործերովդ եւ իրագործումներովդ կարող պիտի ըլլաս փրկութիւն ձեռք ձգել, գիտցիր, թէ դուն տակաւին Օրէնքի ստրկութեան տակ է, որ կ'ապրիս եւ կեանքիդ մէջ չես ընդունած Քրիստոսի փրկարար շնորհքը: Սիրելով ապրինք մեր կեանքը:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ԱՏՏՈՒԾՈՅ ՀՆՆԴԷՊ ՔՈՒ ՎԱՏԱՆՈՒԹԻՒՆԻ Կ՛ՈՒԶԵՍ ԱՐՏԱՅԱՅՏԵԼ, ԿԱՐԴԱՎՍ ԱՎԱՄՈՍ 27

Տէրն է լոյսս եւ փրկութիւնս, որմէ՞ պիտի վախնամ ես: Տէրն է կեանքիս ապաւէնը, որմէ՞ պիտի դողամ ես:

Չար մարդիկ, որոնք հետս թշնամացած՝ զիս կը հալածեն, փորձեցին միսս ուտել, սակայն իրենք տկարացան եւ ինկան: Նոյնիսկ, եթէ ամբողջ բանակ մը վրաս յարձակի, սիրտս վախ պիտի չզգայ նոյնիսկ եթէ ինձի դէմ ճակատամարտ յարդարուի՝ դարձեալ Աստուծոյ պիտի վստահիմ:

Մէկ բան խնդրեցի Տիրոջմէ, եւ սա՛ է աղաչանքս.- Կեանքիս բոլոր օրերուն Տիրոջ տան մէջ բնակիլ, ըմբռնել Տիրոջ վայելչութիւնը, եւ զի՛նք պաշտել իր տաճարին մէջ:

Նեղութեան ժամանակ իր յարկին տակ պիտի պահէ զիս, իր տաճարը զիս պիտի պատսպարէ, ամուր ժայռի վրայ պիտի կանգնէ զիս:

Եւ ահա գլուխս բարձր պիտի կանգնիմ զիս շրջապատող թշնամիներու դէմ, եւ ուրախ աղաղակով գոհեր պիտի մատուցանեմ Տիրոջ տաճարին մէջ, պիտի երգեմ ու նուագեմ իրեն համար:

Ո՞վ Տէր, լսէ՛ աղաչանքս, երբ քեզ օգնութեան կը կանչես, ողորմէ՛ ինձի եւ պատասխան տուր:

ՄԻՇՏ ՍԱՎՄՈՍ ԿԱՐԴԱՆՔ